

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի մագիստրոս

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՃԻՌ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ներկայումս Հայաստանի Հանրապետության նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի մշակմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակ տեսագետների և պրակտիկ աշխատողների կողմից դատարանի դերի և կարգավիճակի վերաբերյալ քննարկվող առավել վիճահարույց խնդիրներից է դատավճիռ կայացնելու փուլում դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու հիմնախնդիրը:

Այսինքն՝ արդյո՞ք դատարանը դատավճիռ կայացնելու փուլում կարող է սեփական նախաձեռնությամբ փոփոխել դատախազի կողմից պաշտպանվող պաշտոնական մեղադրանքը և, փոխելով արարքի որակումը, ամբաստանյալին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածով կամ հոդվածի այլ մասով կամ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ կամ, նույնը թողնելով արարքի իրավաբանական որակումը, փոխել հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, թե՛ դատարանի իրավասությունը պետք է եզրափակվի միայն մեղադրանքի հիմնավորվածությունը և ապացուցվածությունը ստուգելով: Այն է՝ դատական քննության արդյունքում պարզել մեղադրյալին առաջադրված մեղադրանքում սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածով կամ հոդվածի մասով կամ կետով նախատեսված կոնկրետ արարքը մեղադրյալի կողմից կատարելը, և անհամապատասխանության դեպքում կայացնել արդարացման դատավճիռ:

Ապագա քրեադատավարական օրենքում սույն հիմնախնդիրն տրվող լուծումն ունի համակարգային նշանակություն ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի հիմքում դրվելիք տրամաբանության և փիլիսոփայության որոշման տեսանկյունից, քանի որ դրանով կայանաավորվի ոչ միայն դատական քննության փուլում դատարանի իրական դերը և կարգավիճակը, այլ նաև ապագա քրեադատավարական օրենքի հիմքում մրցակցության կամ ի պաշտոնե քննության մոդելների միջև ընտրությունը և ՀՀ Սահմանադրության ու Եվրոպական կոնվենցիային համահունչ դատարանի գործունեության ապահովումը և մեղադրյալի իրա-

վունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Մինչև ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքում տվյալ հիմնախնդրի հնարավոր լուծումներին անդրադառնալն, անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում դրան տրված կարգավորումը:

Հիմք ընդունելով ՀՀ ներկայիս քրեական դատավարության օրենսգրքում դատավարության սուբյեկտների միջև սահմանված գործառնության ընթացումը՝ մեղադրանքի կողմն է օբյեկտիվորեն կրում դատարան ներկայացված մեղադրանքը հիմնավորելու և ապացուցելու ռիսկը, իսկ դատարանը միայն լիազորված է հանուն Հայաստանի Հանրապետության մեղավոր ճանաչել անձին հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝:

Սակայն, գործնականում ծագում են իրավիճակներ, երբ մեղադրողը գտնում է, որ արարքը որակված է ճիշտ և մեղադրանքը փոփոխելու հիմքեր չկան, իսկ դատարանի ներքին համոզմամբ՝ արարքի որակումը ճիշտ չէ, քանի որ, ըստ դատարանի, ամբաստանյալը մեղավոր է քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով կամ հոդվածի այլ մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ կամ տվյալ հոդվածի հանցակազմով նախատեսված այլընտրանքային արարք կատարելու մեջ: Դրանով պայմանավորված առաջանում է հիմնախնդիր, թե ինչ պետք է անի դատարանն այդ դեպքում՝ կայացնի արդարացման դատավճիռ, թե դատավճռով փոփոխի մեղադրյալին առաջադրված մեղադրանքը և ճանաչի նրա մեղավորությունը մեկ այլ հանցագործության կատարման մեջ:

Նախկին օրենսդրության և պրակտիկայի համաձայն՝ դատարանում մեղադրանքի փոփոխությունը թույլատրվում էր, եթե փոփոխվող մեղադրանքը չէր վատթարացնում ամբաստանյալի վիճակը: Եթե դատական քննության ընթացքում դատարանը եզրակացնում էր, որ ամբաստանյալը կատարել է ավելի ծանր հանցանք, քան մեղադրանքի կողմից նրան առաջադրված մեղադրանքը, ապա նման դեպքերում դատարանը ոչ թե փոխում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

եր մեղադրանքը, այլ գործն ուղարկում էր լրացուցիչ նախաքննության :

Հիմք ընդունելով այն սկզբունքը, որ դատարանը կաշկանդված չէր մեղադրանքի կողմի դիրքորոշմամբ՝ նման պրակտիկան երկար տարիներ համարվում էր ընդունելի և դիտարկվում էր բացառապես որպես հումանիզմի դրսևորում, քանի որ դրանով չէր վատթարանում ամբաստանյալի վիճակը և չէր խախտվում նրա պաշտպանության իրավունքը : Այդուհանդերձ, նման մոտեցումը արդարացված էր միայն ձևավորված համապատասխան նախադրյալների գոյությամբ՝ լրացուցիչ նախաքննության ինստիտուտի առկայությամբ և մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում մեղադրանքը փոփոխելու հնարավորության բացակայությամբ :

Սակայն, վերջին մի քանի տարիների ընթացքում միմյանց հաջորդեցին մի շարք իրադարձություններ, որոնք հիմնովին վերափոխեցին դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխման ընթացակարգին դատարանի մասնակցությունը և դրա հիմքում դրված փիլիսոփայությունը :

Նախ ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ. ՄԳՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչվեց լրացուցիչ նախաքննության ինստիտուտը, ապա 28.11.07թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվեցին 309-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, և 309.1-րդ հոդվածը, որի 5-րդ մասի համաձայն, եթե ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերադրակելու որոշում չի կայացնում կամ վերադրակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը :

Այնուհետև, 02.04.2010թ. ՄԳՈ-872 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչվեց 309.1-րդ հոդվածի՝ վերոշարադրյալ 5-րդ մասը :

Արդյունքում ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանվեց այնպիսի իրավական կարգավորում, որ գործը քննող դատարանը ներկայումս չունի որևիցե իրավական գործիք «հուշելու» համար մեղադրանքի կողմին փոփոխելու իր կարծիքով անհիմն մեղադրանքը՝ այդ ճանապարհով «փրկելով» նրան արդարացման դա-

տավճռից : Դատարանը կարող է մեղադրանքի հիմնավորվածության և դրա փոփոխման հարցին անդրադառնալ միայն դատավճռի կայացման փուլում :

ՀՀ գործող քրեադատավարական օրենքն առանձին չի կարգավորել դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու հարցը : Հետևաբար, դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս մեղադրանքի փոփոխման հարցը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի՝ 28.11.07թ. լրացված 2-րդ մասով սահմանված կանոններով : Այսինքն, դատարանը մեղադրանքը փոփոխելիս պետք է ղեկավարվի դատարանում մեղադրանքի փոփոխման ընդհանուր կանոններով :

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը : Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ղեկավարում :

Այսինքն՝ դատարանը դատավճռի կայացման ժամանակ մեղադրանքի փոփոխման հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հետևյալ կանոններով՝

1. դրա արդյունքում չպետք է վատթարանա ամբաստանյալի վիճակը,

2. չպետք է խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը :

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման այս խիստ սահմանները մի կողմից ուղղված են ապահովելու մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մյուս կողմից ապահովելու նրա քրեական գործով օրինական և հիմնավորված դատավճռի կայացման հնարավորությունը :

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման արդյունքում ամբաստանյալի վիճակը չվատթարացնելու պայմանը և ամբաստանյալի պաշտպանության իրավունքը չխախտելու պայմանն ինքնուրույն, բայց, միաժամանակ, սերտորեն փոխկապված կատեգորիաներ են : Այսպես, ամբաստանյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը հանդիսանում է ամբաստանյալի պաշտպանության քրեաիրավական, իսկ պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը՝ ամբաստանյալի պաշտպանության քրեադատավարական երաշխիք : Այսինքն՝ այդ երաշխիքներից առաջինը կարգավորվում է և դրա չխախտված լինելու հանգամանքը որոշվում է քրեական իրավունքի նորմերով, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքով, իսկ երկրորդը՝ քրեադատավա-

րության նորմերով, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Այս իրավական կատեգորիաները սերտորեն առնչվում են միմյանց հետ, բայց նույնական չեն՝:

Մեղադրանքի փոփոխման հետևանքով ամբաստանյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը որոշելու չափանիշ է հանդիսանում սկզբնական մեղադրանքի համեմատ մեղադրյալի համար անբարենպաստ հետևանքների չհանգեցումը: Այսինքն՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ չպետք է խստացնի ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը:

Դատարանը մեղադրանքը չի կարող փոփոխել խստացման առումով, քանի որ այդ դեպքում դատարանը արդարադատություն իրականացնող մարմնից կվերածվի քրեական հետապնդում իրականացնողի, ինչպես նաև կխախտվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը, քանի որ նա կզրկվի նոր մեղադրանքից պաշտպանվելու բոլոր հնարավորություններից:

Մեղադրանքը համարվում է փոփոխված՝ խստացման առումով, եթե մեղադրանքի փոփոխման արդյունքում մեղադրյալի համար ստեղծվում է ավելի անբարենպաստ վիճակ, քան սկզբնական մեղադրանքով: Այսինքն՝ մեղադրանքը համարվում է խստացման առումով փոփոխված, եթե մեղադրանքի փոփոխման արդյունքում կիրառվում է քրեական օրենսգրքի այլ հոդված կամ հոդվածի մաս կամ կետ, որի սանկցիան նախատեսում է ավելի խիստ պատիժ կամ ավելի բարձր պատժաչափ, սկզբնական մեղադրանքի հետ համեմատ նախատեսում է լրացուցիչ պատիժ, կամ որպես այլընտրանք չի նախատեսում պատժի ավելի մեղմ տեսակներ, կամ, երբ ներառվում է արարքը որակյալ դարձնող ծանրանող հանգամանք, կամ մեծացվում է հանցագործությամբ պատճառված վնասը, կամ մեղադրանքի փոփոխման արդյունքում բացառվում է ամբաստանյալի նկատմամբ համաներման կիրառումը, կամ ստեղծվում են հետագայում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ավելի բարդ պայմաններ:

Այսինքն դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման արդյունքում մեղադրյալին առաջադրված մեղադրանքը կամ պետք է մեղմացվի, կամ չպետք է փոխվի մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբանական որակումը: Վերջինը վերաբերում է այն դեպքերին, երբ մեղադրանքի փոփոխման հետևանքով արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոփոխվում է հանցակազմի դիսպոզիցիայի, այսինքն՝ հանցագործության հատկանիշների բովանդակությունը:

Օրինակ՝ դա կարող է կապված լինել միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքի փոփոխման հետ (անձը մեղադրվում է սեռական այլ շահա-

գործման ձևով մարդկանց տրաֆիկինգի ներգրավելու մեջ, սակայն դատական քննության ընթացքում հիմնավորվում է, որ շահագործման ձևը ոչ թե սեռական շահագործումն է, այլ հարկադիր աշխատանքը) կամ միևնույն հանցակազմի հակաիրավական եղանակի փոփոխման հետ (ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը որպես մարդկանց հավաքագրելու հակաիրավական եղանակ թվարկում է խարդախությունը և խոցելի վիճակի օգտագործումը: Եթե անձին մեղադրանք է առաջադրվել անձի խոցելի վիճակն օգտագործելու եղանակով հավաքագրելու համար, սակայն դատաքննության ընթացքում պարզվում է, որ արարքը կատարվել է ոչ թե խոցելի վիճակն օգտագործելու, այլ խարդախության եղանակով):

Ինչ վերաբերում է մեղադրանքը մեղմացման առումով փոփոխելուն, ապա, ըստ Ա. Վ. Ֆեդոտչենկոյի, դա դրսևորվում է մեղադրանքի ծավալից առանձին դրվագներ, հանցակազմեր հանելու, արարքը մեղմացման առումով վերադրակելու, որակյալ հատկանիշներ հանելու եղանակով:

Քրեական դատավարության տեսության մեջ և պրակտիկայում մշակված չափանիշների համաձայն՝ մեղադրանքը մեղմացման առումով համարվում է փոփոխված, եթե.

- մեղադրանքը վերադրակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի ավելի մեղմ պատիժ նախատեսող հոդվածով(մասով, կետով),
- մեղադրանքից հանվում են ամբաստանյալին մեղսագրվող հանցավոր գործունեության առանձին դրվագներ,
- նվազեցվում է հանցագործությամբ պատճառված վնասի չափը,
- մեղադրանքից հանվում են ամբաստանյալի պատասխանատվությունը ծանրացնող կամ նրա համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Մեղադրանքը պետք է համարվի մեղմացման առումով փոփոխված նաև այն դեպքերում, երբ մեղադրանքի փոփոխման արդյունքում հնարավոր է դառնում ամբաստանյալի նկատմամբ համաներման ակտի կիրառումը, կամ ստեղծվում են հետագայում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ավելի հեշտ պայմաններ:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը կապված է դատարանի կողմից մեղադրանքը փոփոխելիս փոփոխված մեղադրանքի հիմքում միայն սկզբնական մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները դնելու հնարավորության հետ:

Տ. Դոբրովոլսկայան նշել է. «Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխման դեպքում մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ է, որ մեղադրանքի ձևակերպման մեջ փոփոխություն նախա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տեսելու, կամ արարքի իրավաբանական որակման փոփոխման, կամ մեղադրանքի նշված երկու տարրերի միաժամանակյա փոփոխման իմաստով մեղադրյալը չորվի իր համար անսպասելի անհրաժեշտության վիճակում և չզրկվի նախկինում իրեն չմեղսագրված փաստերից առանց բավարար ժամանակի պաշտպանությանը նախապատրաստվելու հնարավորությունից»¹² :

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ»-կետի համաձայն՝ մեղադրյալը պետք է ունենա բավականաչափ ժամանակ ու հնարավորություն՝ իր պաշտպանությունը կազմակերպելու համար: Այսինքն՝ դատավճռով մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելիս դատարանը պետք է պարզի, թե արդյոք դրա արդյունքում չի խախտվում մեղադրյալի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով նախատեսված պաշտպանության իրավունքը:

Սադակն և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթները մատնանշում են շահագրգռված անձին «մեղադրանքի» հարցում տեղեկացնելու մասին ծայրահեղ զգույշ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության մասին: Եվրոպական դատարանի կարծիքով՝ ներկայացված մեղադրանքի, և, հետևաբար, դատարանի կողմից դրա հնարավոր իրավական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում պրոպր դատաքննության էական նախապայման է¹³ : Այսինքն՝ մեղադրյալը պետք է տեղյակ լինի իրեն ներկայացված մեղադրանքի հիմքում դրված բոլոր փաստական հանգամանքների հետ և ունենա բավարար հնարավորություններ և ժամանակ այդ մեղադրանքից պաշտպանվելու համար:

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման դեպքում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը խախտվում է բոլոր այն դեպքերում, երբ դատարանը փոփոխված մեղադրանքի հիմքում դնում է այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք նախկին մեղադրանքի հիմքում չեն դրվել և մեղադրյալին չեն մեղսագրվել:

Նույնիսկ, եթե դատարանի կողմից փոփոխված կամ լրացված փաստական հանգամանքները հետագոտվել են դատական քննության ընթացքում, հաստատվում են հավաքված ապացույցներով, բայց ամբաստանյալին չեն մեղսագրվել, չեն դրվել սկզբնական մեղադրանքի հիմքում, ապա դա նշանակում է՝ նա չի ունեցել բավարար ժամանակ կամ միջոցներ¹⁴ կամ հնարավորություն դրանց մերժման համար : Հենց այդպիսի փոփոխության արդյունքում ամբաստանյալը զրկվում է հնարավորությունից և բավարար ժամանակից, որպեսզի համապարփակ կերպով գիտակցի իրեն ներկայացված մեղադրանքը, ընտրի պաշտպանու-

թյան առավել ճիշտ դիրքորոշումը կամ տակտիկան, ներկայացնի միջնորդություններ լրացուցիչ ապացույցների ստացման կամ պատժի մեղմացման նպատակով:

Մեղադրանքի փոփոխման հիմքով մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումը պետք է որոշվի յուրաքանչյուր առանձին գործով: Սակայն, մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումն անվիճելի է բոլոր այն դեպքերում, երբ դատախազի կողմից պաշտպանվող սկզբնական մեղադրանքը և դատարանի կողմից փոփոխված մեղադրանքը տարբերվում են հանցակազմի հատկանիշներով, այսինքն՝ հանցակազմի սուբյեկտով, օբյեկտով, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով:

Այսինքն՝ ցանկացած դեպքում մեղադրանքի փոփոխությունը անթույլատրելի է, եթե դրա արդյունքում փոխվում է հանցակազմի հիմնական կամ ֆակուլտատիվ հատկանիշներից որևէ մեկը, կամ լրացվում է նոր հանցակազմի հատկանիշ, քանի որ դա, անխուսափելիորեն, հանգեցնում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման: Մեղադրանքի փոփոխության ժամանակ դատարանը կարող է միայն հանել սկզբնական մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները, կամ ընդհանրապես չփոփոխել դրանց կազմը, սակայն չի կարող փոփոխել այդ փաստական հանգամանքները կամ լրացնել նոր փաստական հանգամանք:

Այսպես, օրինակ՝ դատարանը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով (ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն) առաջադրված մեղադրանքը փոփոխել 104-րդ հոդվածով (սպանություն) առաջադրված մեղադրանքով, ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածը (պետական, քաղաքական և հասարակական գործիչի սպանությունը) փոփոխել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով կամ 2-րդ մասի 2-րդ կետով (անձի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ), ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը)՝ 113-րդ հոդվածով(դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով), 119-րդ հոդվածը (խոշտանգումը)՝ 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելով), 117-րդ հոդվածը (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը)՝ 118-րդ հոդվածով (ծեծը):

Սակայն, դատարանը դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածը (ավազակություն) չի կարող փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ (կողոպուտ) կամ 177-րդ հոդվածներով (գողություն), կամ ՀՀ քրեական

www.lawinstitute.am

օրենսգրքի 176-րդ հոդվածը չի կարող փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով, քանի որ այս դեպքում փոխվում է հանցակազմի օբյեկտիվ կողմը, կամ 104-րդ հոդվածը (սպանությունը) չի կարող փոխարինել 109-րդ հոդվածով (անգուշությանը մահ պատճառել), քանի որ այս դեպքերում փոխվում է հանցակազմի սուբյեկտիվ կողմը և այլն:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումն առկա է նաև բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից փոխվում է հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը կամ փոփոխվում է միևնույն հանցակազմի հակաիրավական եղանակը:

Այսինքն՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս կարող է փոփոխել մեղադրյալին ներկայացված և դատական քննության ընթացքում դատախազի կողմից պաշտպանվող մեղադրանքը, եթե նոր մեղադրանքը ավելի խիստ չէ, քան սկզբնական մեղադրանքը և դրա հիմքում չեն լրացվել նոր փաստանական հանգամանքներ՝ ի տարբերություն նախորդ մեղադրանքի կամ չեն փոփոխվել վերջինիս հիմքում դրված փաստական հանգամանքները:

Այսպես՝ թիվ ԵԷԳ 0058/01/10 գործով դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ 1-ին մասով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել) նախատեսված հանցագործության կատարման համար մեղադրվող Սիրակ Շավարշի Սաքանյանին առաջադրված մեղադրանքը փոխել է 120-րդ հոդվածի 1-ին մասով (անզգուշությամբ առողջության ծանր վնաս պատճառել) :

Դրա արդյունքում ամբաստանյալի համար թեկուզ և չեն առաջացել անբարենպաստ հետևանքներ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան շատ ավելի մեղմ է, քան 112-րդ հոդվածի սանկցիան, սակայն առկա է նրա պաշտպանության իրավունքի խախտում, քանի որ սկզբնական մեղադրանքի համեմատ փոփոխվել են հանցակազմի սուբյեկտիվ կողմը՝ դիտավորությունն անզգուշությամբ: Այսինքն՝ տվյալ դեպքում դատարանի կողմից մեղադրանքի փոփոխումն անթույլատրելի էր, և դատարանը ոչ թե պետք է փոխեր դատախազի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը, այլ պարտավոր էր կայացնել արդարացման դատավճիռ:

ԵԱԶԳ 0171/01/09 քրեական գործով դատարանը դատավճռով Աննա Ալբերտի Ղազարյանին առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված գողություն) առաջադրված մեղադրանքը փոխել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով

(խոշոր չափերով կատարված գողություն):

Դատարանը, մասնավորապես, դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում նշել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ դատական քննության ընթացքում դատարանի նախաձեռնությամբ մեղադրանքի փոփոխություն հնարավոր է միայն մեղմացման առումով և պայմանով, որ դրանով չի խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Դատարանը կարող է սույն քրեական գործով առաջադրված մեղադրանքը 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից փոփոխել 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքի համար սահմանված է պատիժ չորսից ութ տարի ժամկետով ազատազրկում՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի համար՝ երկուսից վեց տարի ժամկետով ազատազրկում: Այսինքն՝ մեղադրանքի նման փոփոխություններով ամբաստանյալի վիճակը չի վատթարանում:

Տվյալ դեպքում չի խախտվում նաև ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, քանի որ գործի փաստերը նույնն են, իսկ ամբաստանյալը թե՛ նախնական քննության, թե՛ դատական քննության ընթացքում հնարավորություն է ունեցել պաշտպանվելու առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար իրեն առաջադրված մեղադրանքից, այսինքն ավելի ծանր մեղադրանքից» :

Այսինքն՝ տվյալ գործով դատարանը, ի տարբերություն նախորդ գործի, հիմնավորել է նաև դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման թույլատրելիությունը: Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխումը թույլատրելի է, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիան շատ ավելի մեղմ է քան 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի սանկցիան, և ամբաստանյալի պաշտպանության իրավունքը չի խախտվել, քանի որ սկզբնական մեղադրանքի համեմատ միայն հանվել է «գողության առանձնապես խոշոր չափերով» կատարված լինելը, որը փոխարինվել է «խոշոր չափերով կատարված գողությամբ»:

Ելնելով վերոշարադրյալից՝ մեր կարծիքով, գործող քրեադատավարական օրենքով սահմանված դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու կանոնները լիովին բավարար են դատարանին «մեղադրական թեքումից» ձեռքազատելու և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար: Սակայն դեռևս խորհրդային ժամանակներից մե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դադրանքի կողմին «արդարացման դատավճիռ» փրկելու վերաբերյալ արմատացած մտածելակերպը դեռևս խոչընդոտ է իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնների ապահովման համար:

Այդ խնդիրների լուծման ճանապարհին անգնահատելի դեր պետք է ունենա ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը, որի առաջնային խնդիրն է ոչ միայն ժամանակակից իրավական պետության պահանջներին համապատասխան քրեադատավարական վարույթի նախատեսումը, այլ նաև քրեական դատավարության բոլոր սուբյեկտների մոտ այդ պահանջներին համահունչ մտածելակերպի ձևավորմանը նպաստելը:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքի հայեցակարգի 8.22-րդ կետը սահմանում է. «Ելնելով պասիվ դատարանի կարգավիճակից և դատական քննության սահմանների պահպանման կանոնից՝ նախագիծը պետք է կյանքի կոչի հետևյալ հայեցակարգային սկզբունքը. դատական քննության ընթացքում մեղադրանքը կարող է փոփոխվել բացառապես այն սուբյեկտի կողմից, որն այդ մեղադրանքը պաշտոնապես ներկայացրել է դատարանին: Դատախազն օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի հիմնավորվածության և ապացուցվածության ռիսկը և մեկ անգամ օրենսդրական կարգավորման մակարդակով ստանում է այն փոփոխելու հնարավորություն, թեև գրկված չէ նաև մեղադրանքի ընդհանրապես հրաժարվելու իրավասությունից: Նման հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն իրավունք չունի, առավել ևս պարտավոր չէ մեղադրողին «փրկել» արդարացման դատավճիռ, քանի որ դա կհակասի դատական քննության փուլում դատարանի, որպես դատական իշխանություն և արդարադատություն իրականացնող մարմնի, դերին և նշանակությանը:

Նույնիսկ ավելի մեղմ մեղադրանքով մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում դատարանը կխախտի անմեղության կանխավարկածի սկզբունքը, քանի որ որոշում ընդունելիս ընտրություն է կատարելու ոչ թե մեղադրյալի մեղավորության և, անմեղության միջև, այլ միայն քննարկելու է, թե որ հանցանքի կատարման մեջ է մեղավոր անձը»:

Նշված կանոնի Հայեցակարգի 8.24-րդ կետը սահմանել է մեկ բացառություն: Այն է՝ դատարանը, չփոխելով մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները, կարող է մեղադրանքի ծավալից հանել մեղադրյալի պատասխանատվությունը, արարք որակյալ դարձնող և /կամ/ պատիժը ծանրացնող հանցակազմի հատկանիշներ, ինչպես նաև մեղադրյալի համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այս պարագա-

յում գործում է այսպես կոչված կլանման սկզբունքը, երբ հանցակազմի որակյալ հատկանիշներ պարունակող մեղադրանքը ներառում է հասարակ մեղադրանքը և այդօրինակ, ինչպես նաև պատիժը ծանրացնող և բացասական այլ հանգամանքների բացառումը մեղադրանքից չեն խախտում մեղադրյալի պաշտպանության իրավունքը կամ կասկածանքի տակ չեն դնում դատարանի կողմից անմեղության կանխավարկածի պահպանումը»:

Այսինքն՝ ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգիրքը հիմնվել է դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման թույլատրելիության այն նույն չափանիշների վրա, որոնք նախատեսված են ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 309 հոդվածի 2-րդ մասում: Այն է՝ դրա արդյունքում մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը և նրան ներկայացված մեղադրանքն ավելի խիստ մեղադրանքով փոփոխելու անթույլատրելիությունը:

Ելնելով դատարանի կողմից մեղադրանքը փոփոխելու դեպքում կայացվելիք դատավճիռի առավել հիմնավորված լինելն ապահովելու անհրաժեշտությունից՝ ապագա քրեադատավարական օրենսգրքում անհրաժեշտ է սահմանել նաև, որ դատարանը դատավճիռ կայացնելիս մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու դեպքում պարտավոր է պարտադիր կերպով հիմնավորել, որ մեղադրանքի փոփոխման արդյունքում չի խախտվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և չի վատթարացել նրա վիճակը:

Կարծում ենք՝ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու վերաբերյալ 28.11.07թ. ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները, ՀՀ Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումները, 2010թ. ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգի կարգավորումները և այդ հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ քննարկումները կապահովեն այդ հիմնախնդրի այնպիսի օրենսդրական կարգավորումը և պրակտիկ կիրառումը, որը ՀՀ Սահմանադրության և Եվրոպական կոմիտեցիային համահունչ կապահովի դատարանի որպես արդարադատության իրականացնող մարմնի դերը և կարգավիճակը և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության: Ընդհանուր մաս: Երևան, Եր. համ. հրատ. 2006թ. 197-րդ էջ:

² Տե՛ս Ղանբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքի հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, 34 էջ:

³ Տե՛ս ՀՀ կառավարության 2010 մարտի 10-ի որոշմամբ հաստատված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) 8.19-րդ կետ, 42-րդ էջ:

⁴ Տե՛ս Հայեցակարգի 8.20-րդ կետ, 42-րդ էջ:

⁵ Տե՛ս Бравилова Е.А. Пределы судебного разбирательства по УП РФ // Актуальные проблемы реформирования законодательства и экономики России и стран СНГ- 2002. Материалы Международной научно-практической конференции, 12-13 апреля 2002г.: В 3 ч. / Под общ. ред. В.А. Киселевой. Юж. Урал. гос. ун-т, Фак. Экономика и право. Челябинск. 2002. Ч.3. С. 194.

⁶ Տե՛ս Бравилова Е.А. Недопустимость нарушения права на защиту как условие изменения обвинения в суде / Е.А. Бравилова // Правовая защита частных и публичных интересов: материалы Общероссийской межвузовской научно-практической конференции, 22-23 января 2003г. / Отв. ред. В.Ф. Горбовой, З.В. Макарова; Юж-Урал. гос. ун-т, Финансово - экономический фак. - Челябинск. ЮУрГУ. 2003. С.84-93.

⁷ Տե՛ս Бравилова Е.А. նույն տեղը:

⁸ Տե՛ս Հայեցակարգի 8.17 կետ:

⁹ Տե՛ս Ղանբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքի հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, 53 էջ:

¹⁰ Տե՛ս Федотченко А. В. Привлечение лица в качестве обвиняемого. Автореф. Дисс. ... канд. Юрид. Наук. М. 2006. С. 13.

¹¹ Տե՛ս Հայեցակարգ 8.18-րդ կետ:

¹² Տե՛ս Добробольская Т. Н. Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М Юрид. Лит. 1977. С 58.

¹³ Տե՛ս Պելիսյեն և Սասին ընդդեմ Ֆրանսիայի որոշումը 25.04.1999թ., բողոք N25444/94,ECHR 1999-II, էջ 52:

¹⁴ Տե՛ս Печников Н.П.. Уголовный процесс (Особенная часть): конспект лекций. Тамбов: Изд-во Тамб. гос.техн. ун-та,2005. 112 с.

¹⁵ Տե՛ս Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի(նախագահությամբ դատավոր Արթուր Օհանյանի) կողմից թիվ ԵԷԴ- 0058/01/10 գործով կայացված դատավճիռ:

¹⁶ Տե՛ս Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ դատավոր Մխիթար Պապոյանի) կողմից թիվ ԵԱԶԴ- 0171/01/09 կայացված դատավճիռ:

РЕЗЮМЕ

Изменение судом первой инстанции обвинения по собственной инициативе

В этой работе представлен вопрос об изменении судом по собственной инициативе обвинения возложенного на подсудимого в ходе уголовного процесса, а также полностью проанализированы те критерии, на основании которых суд имеет право изменить обвинение, и которые необходимы для защиты прав и законных интересов подсудимого в соответствии с Конституцией Республики Армения. В работе также представлены регулирование данного вопроса по концепции нового Уголовно- процессуального кодекса Республики Армения и предложения по ее усовершенствованию.

SUMMARY

Altering the charge, by the general jurisdiction court upon own initiative

This work covers the issue of altering the charge, brought against the accused, by the court upon own initiative in criminal proceedings in the Republic of Armenia, provides a thorough and comprehensive analysis of those standards whereupon the court may alter the charge and which are necessary for the protection of the rights and legal interests of the accused in compliance with the Constitution of the Republic of Armenia. The work deals also with the regulation of this issue in the concept paper for the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, and includes recommendations for its improvement.